# Համաժողովի նորություններ

## Քանի՞ տաճար կա

Տաճարները կառուցվում են ամբողջ աշխարհում: Քանի՞ տաճարի կառուցման մասին հայտարարեց նախագահ Նելսոնն այս համաժողովում:

8 Հյուսիսային Ամերիկայում
+ 1 Կարիբյան կղզիներում
+ 1 Կենտրոնական Ամերիկայում
+ 2 Հարավային Ամերիկայում
+ 2 Եվրոպայում
+ 3 Աֆրիկայում
= ______ տաճար

**Տաճարների ընդհանուր թիվը**

| | |
|---|---|
| 190 | գործող |
| 116 | հայտարարված |
| 50 | կառուցման փուլում |
| 7 | վերանորոգման փուլում |

## Երեխաների երգչախումբը



Հարյուրավոր երեխաներ Յուտայից (ԱՄՆ) երգեցին շաբաթ ցերեկային նիստում: Այդ երգերից երեքը նոր՝ *Օրհներգեր տան և եկեղեցու համար* երգարանից էին:



«Եթե խոսեք Աստծո հետ ... դուք ավելի կմոտենաք Նրան»:

Նախագահ Հենրի Բ. Այրինգ՝ Առաջին Նախագահության երկրորդ խորհրդական



«Յուրաքանչյուր հոգի թանկ է Տիրոջ համար»:

Երեց Քվենթին Լ. Քուք Տասներկու Առաքյալների Քվորումից



«Ապաշխարությունը թույլ է տալիս մեզ զգալ Աստծո սերը»:

Քույր Քրիստին Մ. Յի, Սփոփող միության գերագույն նախագահության երկրորդ խորհրդական

ՊԱՏԱՍԽԱՆ. 17



# Համաժողովը դիտում են ողջ աշխարհում



Ինձ դուր է գալիս լսել առաքյալներին և մեր մարգարե Ռասսել Մ. Նելսոնին, երբ նրանք ելույթ են ունենում համաժողովի ժամանակ: Ես շատ ուրախ եմ, որ ունենք 100 տարեկան մարգարե:

**Լուսիանո Ֆ., 6 տարեկան, Մագալանես (Չիլի)**



Գերագույն համաժողովի ժամանակ երգելն ինձ շատ երջանկացրեց, մասնավորապես երբ երգում էի Հիսուս Քրիստոսի և Երկնային Հոր մասին:

**Անելիս Գ., 10 տարեկան, Յուտա (ԱՄՆ)**



Գերագույն համաժողովը անձնական ոգեշնչում փնտրելու և ստանալու լավագույն ժամանակն է:

**Ջենիս Կ., 12 տարեկան, Գոա (Հնդկաստան)**



Իմ ճյուղի նախագահը պատրաստել էր հաց ու պատասխանի էջեր երեխաների միության համար: Այն օգնեց ինձ լսել համաժողովի ելույթները: Դա շատ զվարճալի էր:

**Յեն-Տինգ Ս., 10 տարեկան, Չանխուայի գավառ (Թայվան)**

## Այժմ և այն ժամանակ

Առաջին գերագույն համաժողովում՝ 194 տարի առաջ, մարդկանց միայն մի փոքր խումբ կարող էր անձամբ լսել մարգարեին:



**100** տարի առաջ մարդիկ կարող էին լսել համաժողովը ռադիոհեռարձակման միջոցով:



**75** տարի առաջ նրանք կարող էին նայել այն հեռուստացույցով:



**25** տարի առաջ նրանք կարող էին լսել կամ նայել այն առցանց:



Այսօր մարդիկ կարող են նայել և լսել գերագույն համաժողովը երկրագնդի ցանկացած վայրից: